

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 37/1

18 սեպտեմբերի 2012թ.

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 21.08.2012թ-ի նիստում քննության է առնվել «Մեդիտեք» ՍՊԸ 02.08.2012թ-ի թիվ 44 գրությամբ բերված գանգատը « ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 13.07.2012թ. թիվ 1011780 ստուգման ակտի դեմ: Մասնավորապես, համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 17.09.2010թ. թիվ 1011780 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Մեդիտեք» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող « օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 13.07.2012թ-ին կազմվել է թիվ 1011780 ստուգման ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 28.129.934 դրամ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 03.09.2012թ. թիվ 25 որոշման, սույն գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու « օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է 15 օրով:

Ընկերության գանգատի վերաբերյալ « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից ընդունվել է որոշման նախագիծ, որն ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է համապատասխան եզրակացություն:

Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ « ԿԱ ԱԱԾ քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչի 04.09.2012թ-ի որոշման 1-ին կետի համաձայն քրեական գործով «Մեդիտեք» ՍՊԸ-ում նշանակվել է 2009-2012թ.թ. ժամանակահատվածի գործունեության հարկային վերստուգում, որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդի եզրակացության առկայությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի դրույթներով, գտնում է, որ «Մեդիտեք» ՍՊԸ 02.08.2012թ-ի թիվ 44 գրությամբ բերված գանգատի հիման վրա « ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Մեդիտեք» ՍՊԸ 02.08.2012թ-ի թիվ 44 գրությամբ բերված գանգատի հիման վրա « ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԱՐՄԵՂՅԱՆ